ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ՝ 1821-1823 ԹԹ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Լ. Ա.

XIX դ. առաջին կեսը առանձնահատուկ է ինչպես եվրոպական, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևեքի երկրների պատմության մեջ:

Արևելյան երկրների միջպետական հարաբերություններում էական տեղ են զբաղեցնում թուրք-պարսկական հարաբերությունները, որոնք հիմնականում դրսևորվում էին այդ պետությունների միջև պարբերաբար տեղի ունեցող պատերազմներով: Դրանց հիմնական պատճառը Արևելքից Եվրոպա տանող ռազմատնտեսական կարևոր նշանակության ճանապարհները վերահսկելու և իսլամական աշխարհում առաջնություն ստանալու ձգտումն էր:

Անգլիայում, շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, կառավարող վերնախավը աճող հետաքրքրություն էր ցուցաբերում սպառման և հումքի աղբյուրների պոտենցիալ շուկաներ հանդիսացող Թուրքիայի և Պարսկաստանի նկատմամբ: Անգլիան, առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, կամ միմյանց դեմ էր հրահրում այդ պետություններին, կամ փորձում էր դրանց թշնամական գործողությունների մղել իր հակառակորդների դեմ:

Իր հերթին, Ռուսաստանը հավակնություն ուներ Այսրկովկասի և Միջին Ասիայի նկատմամբ: Արևելքում հաջողություններ ունենալով հանդերձ, ռուսները հակասությունների մեջ էին անգլիացիների հետ. իրար էին բախվում երկու նվաճողական հոսանքներ: Անգլո-ռուսական և թուրք-պարսկական հարաբերություններում դրանք ցայտուն կերպով դրսևորվեցին XIX դ. սկզբին:

XIX դ. առաջին կեսից եվրոպական պետությունների՝ «օսման-ների ժառանգության» համար պայքարում մեծանում է Պարսկաստանի նշանակությունը: Միմյանց դեմ պարսկական բանակը օգտագործելու՝ անգլիացիների և ռուսների ձգտումը որոշակի արդյունքներ էր տալիս: Դա պայմանավորված էր Թուրքիայի և Պարսկաստանի միջև գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական և կրոնական սուր հակասություններով: Պարսկաստանի իշխող վերնախավերը փորձում էին արևմտյան և հյուսիս-արևմտյան սահմաններին իրականացնել սեփական շահերից բխող քաղաքականություն՝ օգտագործելով եվրոպական երկրների հակասությունները:

Ղաջարների դինաստիայի ներկայացուցիչների, մասնավորապես Ֆաթհ-Ալի շահի որդու՝ թագաժառանգ Աբբաս-Միրզայի հիմնական նպատակը Նադիր-Շահ Աֆշարի տերությունը վերականգնելն էր: Այդ նպատակի իրականացման գլխավոր խոչընդոտը Օսմանյան կայսրությունն էր, որի գահակալները բոլոր մուսուլմաններին գլխավորելու

հավակնություններ ունեին: Այս ամենի հետևանքը հարևան երկու տերությունների սահմանային մշտական վեճերն էին, որոնք էլ եվրոպական տերություններին հնարավորություն էին ընձեռում, սեփական նպատակներով, Օսմանյան կայսրությունը և Ղաջարների պետությունը միմյանց դեմ օգտագործել: Աբբաս-Միրզային Օսմանյան կայսրության դեմ հրահրում էին միաժամանակ և՛ պետության մեջ պետություն դարձած բրիտանական Արևելահնդկական ընկերությունը, և՛ Ռուսաստանը:

Երկու տերությունների միջև առաջին լուրջ բախումները, ոչ առանց անգլիական միջամտության, սկիզբ առան ներկայիս Պարսկաստանի հետ սահմանակից Օսմանյան կայսրության Շահրիզորի, Մոսուլի և Բաղդադի փաշայություններում: 1816 թ. Օսմանյան կայսրության Բաղդադի փաշայության կառավարիչ նշանակված Դաուդ-փաշան անմիջապես փորձեց ամուր հիմքերի վրա դնել իր իշխանությունը Օսմանյան կայսրության մի այնպիսի տարածաշրջանում, որը նախորդ 15 տարիների ընթացքում հայտնվել էր անիշխանության և տնտեսական քայքայման վիճակում: Ամենից բարդը Իրաքյան Քրդստանի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր, որի իշխող քուրդ ցեղապետները այդ ժամանակ հպատակվել էին պարսից շահին: 1818-1819 թթ. Դաուդ փաշայի փորձը՝ հեռացնել պարսկական դրածո, Սուլեյմանիեի կառավարիչ Մահ-մուդ փաշա Բաբանին, ձախողվեց: Դաուդ փաշան անհաջողության պատճառը ոչ առանց հիմքի համարում էր Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչ Ջեյմս Ռիչին: Նրան մեղադրելով քրդերին անհնազանդության մղելու մեջ՝ Դաուդ փաշան պայքարի մեջ մտավ Արևելահնդկական ընկերության հետ: Նրա հրահանգով ընկերության ներկայացուցիչները, հիմնականում պարսիկներ, զրկվեցին արտոնություններից և հավասարեցվեցին տեղացի մնացած առևտրականներին, իսկ անգլիական ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը ավելացվեցին երկու անգամ: Ի պատասխան դրա՝ Ռիչը մարտական պատրաստության բերեց իր զորքերը, հրամայեց Տիգրիս մտցնել ընկերության ռազմանավերը և ընդհատել հաղորդակցությունը Բասրայի ու Բաղդադի միջև: Իր հերթին, Դաուդ փաշան բռնագրավեց Արևելահնդկական ընկերության ապրանքները և պաշարեց Բաղդադի՝ նրա կենտրոնակայանը, բայց հանդիպելով դիմադրության՝ 1821 թ. մայիսին Ռիչին և Արևելահնդկական ընկերության բրիտանացի բոլոր ծառայողներին ստիպված թույլ տվեց հեռանալ Օսմանյան կայսրությունից:

Ձերբազատվելով Ռիչից՝ Դաուդ փաշան անմիջապես վերսկսեց մարտական գործողությունները Սուլեյմանիեի կառավարչի դեմ, սակայն նրա զորքերը ջախջախվեցին պարսիկների և քրդերի միացյալ ուժերից: Այնժամ Դաուդ փաշան հալածանքներ սկսեց Իրաքում ապրող շիաների նկատմամբ. բռնագրավվեց Քարբալայի և Ան-Նաջաֆի սրբավայրերի ունեցվածքը՝ շիկացնելով թուրք-պարսկական հարաբերությունները[1]:

[1] Истори Востока, т. IV, Восток в новое врем (конец XVIII– начало XX вв.), кн. 1, М., 2004, с. 100.

Այդ հարաբերությունների վատթարացմամբ շահագրգռված էր նաև ցարական Ռուսաստանը, որը պարսկական կառավարող վերնախավին հրահրում էր 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում Պարսկաստանի կրած պարտությունից հետո Այսրկովկասում նրա տարածքային կորուստները փոխհատուցել Օսմանյան կայսրությանը պատկանող Արևմտյան Հայաստանի և Միջագետքի նվաճմամբ: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբում Ա. Գրիբոյեդովը այսպիսի մտահանգում է արել. «Լավ կլիներ Աբբաս Միրզային հրահրել թուրքերի դեմ... 1821 թ. ես դա շատ հաջող իրականացրի»[2]: Թուրք-պարսկական պատերազմը ճանապարհ կհարթեր Մերձավոր Արևելքում ռուսական արտաքին քաղաքական հետևյալ ծրագրերի իրականացման համար. 1. իր սահմանակից երկու պետությունների փոխադարձ թուլացումը կհեշտացներ նրանց հաշվին հետագա տարածքային նվաճումները, 2. թուրքերի հիմնական ուժերը կհեռացներ Բալկաններից, որտեղ ռուսները նպատակ ունեին ռազմաքաղաքական վերահսկողություն հաստատել և այդ նպատակով խրախուսում էին տեղաբնիկ հույների ու սլավոնների ապստամբական ելույթները, 3. պարսկական շուկայի նվաճման համար անհրաժեշտ էր այդ երկրից դուրս մղել անգլիական և թուրքական ապրանքները, ինչը անհնար էր առանց Տրապիզոն-Թավրիզ առևտրական ճանապարհը փակելու[3]:

Ամեն կերպ գրգռելով Աբբաս-Միրզայի փառասիրությունը՝ ռուսները հաշվի էին առնում այն, որ թուրք-պարսկական պատերազմը անխուսափելիորեն կվիժեցնի Լոնդոնի՝ անգլո-թուրք-պարսկական հակառուսական դաշինք ստեղծելու ծրագրերը: Միաժամանակ, այդ պատերազմը, ըստ ռուսների հաշվարկների, պետք է թուլացներ Օսմանյան կայսրությունում Անգլիայի ազդեցությունը. զինելով պարսկական բանակը՝ Լոնդոնը հույս ուներ, որ այդ զենքը կուղղվի Ռուսաստանի դեմ, և Թեհրանի՝ 1814 թ. նոյեմբերի 25-ի անգլո-պարսկական պայմանագրով տարեկան 200.000 թումանի ռազմական օժանդակություն էր տրամադրում Պարսկաստանին[4]: Սակայն իրականում այնպես ստացվեց, որ 1821 թ. Պարսկաստանը մտավ պատերազմի մեջ անգլիական ազդեցության ծիրում գտնվող Օսմանյան կայսրության դեմ: Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովը Ռուսաստանի արտգործնախարար Կ. Նեսսելրոդեին գրում է. «Թուրք-պարսկական պատերազմը մեզ շատ ձեռնտու է, քանի որ թուրքերի հետ մեր հարաբերությունները խզելու դեպքում նրանց փոխադարձ թշնամանքը մեզ համար բավական շահավետ է, չնայած պարսիկների օժանդակության կարիքը չունենք»[4]:

---

[2] **Шостакович С.** *Дипломатическая деятельность Грибоедова, М., 1960, с. 70.*

[3] **Иванов М.** *Очерки истории Ирана, М., 1952, с. 136.*

[4] *Акты, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКТЫ), т. VI, ч. 2, Тифлис, 1875, с. 253.*

Վստահ չլինելով, որ առաջիկա պատերազմում կարող է միայ-նակ հասնել հաղթանակի, Աբբաս Միրզան հաշվարկում էր օգտվել հույների՝ թուրքական բռնակալության դեմ սկիզբ առած ապստամբությունից. նախ, թուրքերը ստիպված էին լինելու Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում տեղակայված իրենց ուժերի զգալի մասը տեղափոխել արևմուտք, երկրորդ՝ նա ենթադրում էր, որ Ռուսաստանը անպայման հանդես կգա թուրքական բռնակալության դեմ ապստամբած հույների օգտին: Ռուսաստանի դեսպան Գ. Ստրոգոնովի՝ սուլթանին ներկայացրած վերջնագիրը և դրան հետևած դիվանագիտական հարաբերությունների խզումը որոշակիորեն հաստատում էին պարսից թագաժառանգի հաշվարկները. նա Ա. Երմոլովին նույնիսկ տեղեկացրեց, թե իբր նրան Օսմանյան կայսրության դեմ պատերազմել է պարտավորեցնում քրիստոնյա հույների նկատմամբ թուրքերի դաժան վերաբերմունքը[5]: Վստահ լինելով, որ Ռուսաստանի ու Օսմանյան կայսրության դիվանագիտական հարաբերությունների խզմանը հետևելու են ռազմական գործողություններ այդ պետությունների միջև Աբբաս Միրզան որոշեց օգտվել թուրքերի համար այս աննպաստ պայմաններից, պատերազմ սկսել և այդ պատերազմում հանդես գալ քրիստոնյաների պաշտպանի լուսապսակով: Այդ նպատակով նա Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմ Հորագեղցուն խնդրեց օրհնել իր սուրը[6]:

1804-1813 թթ. պատերազմում Պարսկաստանի պարտությունը քամահրանք և անպատժելիության զգացողություն առաջացրեց սահմանամերձ օսմանյան տարածքներին իշխողների մոտ: Պարսիկների նկատմամբ թուրքերի ապօրինությունների վերաբերյալ լոնդոնյան «Թայմս» թերթը գրում էր. «Էրզրումի նահանգի թուրք փաշաները մշտապես բռնություններ էին գործադրում պարսկական ուխտավորների, առևտրականների և ճանապարհորդների նկատմամբ: Թագաժառանգ Աբբաս Միրզան հաճախ թուրք նահանգապետների նմանօրինակ անբարյացակամ գործողությունների պատճառով բողոքներ էր հղում Կ. Պոլիս: Նրան խոստումներ էին տրվում այդ բողոքներին ընթացք տալու, և, չնայած այն բանին, որ Էրզրումի փաշաները հաճախ պաշտոնանկ էին արվում, իրավիճակը չէր փոխվում»[7]: Պատերազմի համար առիթ ծառայեցին երկու միջադեպեր, որոնք կարելի էր հարթել դիվանագիտական միջոցներով. առաջինը քրդական հինգ՝ հայդարանլի, զիլան, միլան, շիկակ և խարքի ցեղերի՝ Իրանական Ադրբեջանից փախչելով հաստատվելն էր թուրքական տարածքում: Աբբաս-Միրզայի՝ նրանց վերադարձնելու պահանջը Էրզրումի Խոջա Խոսրեվ Մեհմեդ

---

[5] **Потто В.** *Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. 3, Персидская война 1826-1828 г., СПб., 1888, с. 9.*

[6] *Նույն տեղում:*

[7] **Тарасов С.** *Аббас-Мирза и армянский проект: открытия Гюлистанского мира 1813 года /http://www.iarex.ru/articles/40443.html*

փաշան ոչ միայն մերժեց, այլև բանտարկեց պարսիկ դեսպանին[8]: Երկրորդ միջադեպը շատ ավելի վիրավորական էր, քանի որ շոշափում էր պարսից շահի ընտանեկան պատիվը. թուրքական իշխանությունները բռնագրավեցին Օսմանյան կայսրության տարածքով Մեքքա ուխտագնացության մեկնած Ֆաթհ-Ալի շահի կանանցից մեկի ունեցվածքը[9]: Թուրքերի դեմ պատերազմ սկսելու համար պարսիկների համար ձեռնտու էր նաև Օսմանյան կայսրության ներսում ստեղծված խառնակ վիճակը. բացի հույների ապստամբությունից, քայքայվող կայսրության և՛ եվրոպական, և՛ ասիական տարածքներում 1820 թ. այլ խռովություններ բռնկվեցին: Զեռնոգորիայում թուրքերը արտաքսվեցին Զետա գետի հովտից, Յանինայի Ալի փաշան հրաժարվեց նույնիսկ անվանականորեն ենթարկվել սուլթանին, 1821 թ. Վլադիմիրիսկուի գլխավորությամբ ապստամբություն բռնկվեց Վալախիայում, Միրայում. մի կողմից, Աքքրայի, մյուս կողմից՝ Հալեպի ու Դամասկոսի փաշաների միջև բախումները մեծ ծավալներ ընդունեցին[10]:

Այս բոլոր գործոնների համադրումը հանգեցրեց 1821-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմին: Ռազմական գործողությունների ընթացքի վերաբերյալ օտար հեղինակների տեղեկությունները սուղ են, իրարամերժ և ունեն կանխակալ բնույթ: Կովկասի ռուսական կառավարչապետ Ա. Երմոլովը, որի նոթերը հիմք են դարձել Վ. Պոտտոյի և թեմային հպանցիկ անդրադարձած խորհրդային պատմաբանների համար, նպատակամղված նսեմացնում է թուրքական և պարսկական բանակների մարտունակությունը, իսկ նրանց հրամանատարներին ապաշնորհ համարում: Բացի այդ, Երմոլովի նոթերում մեր թեմային վերաբերող ժամանակագրությունը իսպառ բացակայում է[11]:

Վ. Պոտտոն, որի հիմնական աղբյուրը, ինչպես նշեցինք, Երմոլովի հիշողություններն են, գրում է. «Աֆղանների հետ հաջող բախումները զգալիորեն բարձրացրին պարսիկների ոգին, և 1821 թ. նրանք Թուրքիայի դեմ պատերազմ սկսեցին»[12]: Այս հեղինակը 1821 թ. ծավալված ռազմական գործողությունների վերաբերյալ լռում է: Պոտտոն և ժամանակակից անգլիացի պատմաբան Գ. Ուիլյամսոնը գտնում են, որ պատերազմի հիմնական իրադարձությունները ծավալվել են հաջորդ՝ 1822 թ.: Այստեղ տեղին է նշել, որ բրիտանացի հեղինակ Ջ. Ֆրեզերը պատերազմի սկիզբ է համարում նույն՝ 1822 թ.[13]: Բարեբախտաբար քննարկվող իրադարձություններին ժամանակակից հայ տարեգիրները՝ Սեբաստիայի Սբ. Նշան վանքի վանահայր Հովհաննես Սեբաստացին, Մուշի Սբ. Կարապետի վանքի անանուն միաբանը և նրանցից հիսուն տարի անց

---

[8] **Иванов М.,** *նշվ. աշխ., էջ 137;* **Балаян Б.** *Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Е., 1988, с. 117-118;* **Sykes P.** *History of Persia, v. II, London, 1915, p. 416.*

[9] *Նույն տեղում:*

[10] **Shaw, S. and Shaw, E.** *History of the Ottoman Empire, Vol. 2, Cambridge, 2002, p. 54.*

[11] *Записки А. П. Ермолова, 1798-1826 гг., М., 1991, с. 390.*

[12] **Потто В.,** *նշվ. աշխ., էջ 9:*

[13] **Fraser J.** *1783-1856: Historical and descriptive account of Persia…, London, 1832, p. 219.*

թեմային անդրադարձած Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին հնարավորություն են տալիս վերականգնելու պատերազմի իրական ընթացքը: Նրանց թողած տեղեկությունները սկզբնաղբյուրների արժեք ունեն և աչքի են ընկնում իրենց արժանահավատությամբ և անկողմնակալությամբ[14]:

Պատերազմի սկիզբ է համարվում 1821 թ. սեպտեմբերը, երբ պարսկական բանակները արքայազներ Աբբաս Միրզայի և Մուհամմադ-Ալի Միրզայի հրամանատարությամբ ներխուժեցին Օսմանյան կայսրության տարածք: Սակայն դա լայնածավալ ռազմական գործողությունների սկիզբն է միայն, քանի որ սուլթան Մահմուդ Բ-ն Պարսկաստանին պատերազմ է հայտարարել 1820 թ. նոյեմբերին[15]: Ռազմական գործողությունները ծավալվեցին թուրք-պարսկական սահմանի ողջ երկայնքով. պարսկական բանակները ներխուժեցին կայսրության տարածք Աբբաս Միրզայի հրամանա-տարությամբ՝ Երևանի խանությունից և Իրանական Ադրբեջանից Արևմտյան Հայաստան՝ Բայազետի փաշայություն, Բասեն, Խնուսի, Մանազկերտի, Մուշի դաշտ,[16] և Մուհամմադ-Ալի Միրզայի հրամանատարությամբ՝ Քերմանշահից ու Խուզեստանից դեպի Իրաքյան Քուրդիստան և Բաղդադի փաշայություն[17]:

Բայազետի Բահլուլ փաշայի պաշտոնանկությունից հետո այստեղ սկիզբ առած խառնակությունները նպաստեցին պարսիկների հաջողություններին: Բայազետի մատույցներում տեղի ունեցած ճակատամարտում Չեչենզադե Հասան փաշայի գլխավորած թուրքական զորաջոկատի պարտությունից հետո Բայազետի փաշան առանց դիմադրության լքեց Բայազետի բերդը և փախավ Էրզրում[18]:

Ա. Երմոլովը իր նոթերում հպանցիկ անդրադառնում է պարսիկների կողմից Բայազետի, Մանազկերտի և Մուշի բերդերը գրավելուն[19]: Բայազետի գրավմանը հաջորդած իրադարձություններին անդրադարձած՝ Սբ. Կարապետի վանքի միաբան ժամանակագրի մանրամասն տեղեկությունների համաձայն, Բայազետի մատույցներում ճակատամարտը շահելուց հետո պարսկական բանակը Քյոփրիքյոյ-Խնուս-Վարդո և Պատնոց-Մանազկերտ-Բուլանխ ուղղություններով ներխուժեց Մուշի դաշտ և, գերիներով ծանրաբեռնված, ճամբար դրեց Հունան գյուղի մոտ: Մուշի Սելիմ փաշան սկզբում փորձեց դիմադրություն ցույց տալ, սակայն Ֆռանկի Նորշեն գյուղի մոտ տեղի ունեցած մարտից հետո կողմերի միջև բանակցություններ սկսվեցին գերիների փոխանակության վերաբերյալ: Մեր աղբյուրը սխալմամբ պարսկական կողմից

---

[14] *Դիւան հայոց պատմութեան, կազմեց Գիւտ ավագ քահանա Աղանեանց (այսուհետև՝ Դիւան), Գ. Ժ, Թիֆլիս, 1912, էջ 432-433; 515-517, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի էլեկտրոնային գրադարանի թվայնացված ձեռագիր MM-4331-185b-188b (այսուհետև՝ MM-4331):*

[15] **Shaw, S. J. and Shaw, E. Z.,** *նշվ. աշխ., էջ 16:*

[16] *Դիւան, էջ 515; MM-4331-185b:*

[17] **Իվանով Մ.,** *նշվ. աշխ., էջ 137:*

[18] *Դիւան, էջ 432; http://www.karalahana.com/makaleler/tarih/osmanli-iran-savasi -1821-1823.html*

[19] *Записки А. П. Ермолова, с. 390.*

բանակցող է համարում Ֆաթհ-Ալի շահին[20]: Սակայն վերջինս ռազմական գործողություններին անձամբ չի մասնակցել: Արևմտյան Հայաստանում ընթացող պատերազմում պարսկական բանակը գլխավորում էր թագաժառանգ Աբբաս Միրզան, որի հետ էլ բանակցում էր Սելիմ փաշան:

Ա. Երմոլովը նշում է, որ «թուրքական փաշաներից մեկի դավաճանությունը շատ նպաստեց նրանց (պարսիկների-Մ.Լ.) հաջողություններին»[21]: Երմոլովը չի տալիս դավաճանի անունը, չի անդրադառնում նաև դավաճանության հանգամանքներին: Այդ մասին խոսում է Սբ. Կարապետի վանքի ժամանակագիրը, որի հաղորդման համաձայն, Մուշի Սելիմ փաշան բանակցությունների ընթացքում անցավ պարսիկների կողմը և խանական տիտղոս ստացավ[22]: Թուրք պատմաբան Ազիզ Թեքդեմիրի «XIX դ. առաջին կեսի Օսմանյանան կայսրություն-Իրան հակամարտությունը և 1821-1823 թթ. պատերազմը» հոդվածում նույնպես անդրադարձ կա Սելիմ փաշայի՝ պարսիկների կողմն անցնելու մասին: Թեքդեմիրը գրում է. «Սելիմ փաշան, հակված լինելով պարսիկների կողմն անցնելու, Աբբաս Միրզայի հետ նամակագրական կապ ուներ»[23]: Վերջինս 1821 թ. նոյեմբերին գրավեց Բիթլիսի և Արճեշի բերդերը՝ ավարտելով պատերազմի այդ փուլը[24]:

Արևմտյան Հայաստանում պարսկական ներխուժման սլաքներից մեկն էլ ուղղված էր Բայազետից դեպի Ներքին Բասեն և նրա կենտրոն Հասան-Ղալա: Այս ուղղության վրա գործում էր Երևանի խանության հեծելազորը՝ Երևանի Հուսեին-Ղուլի սարդարի եղբոր՝ Հասան խանի հրամանատարությամբ: Թեքդեմիրը գրում է, որ Հասան խանը Հասան-Ղալան գրավել է պատերազմի սկզբին[25]: Վ. Պոտտոն Հասան-Ղալայի գրավումը թվագրում է հաջորդ տարով՝ 1822 թ.[26]: Ուիլյամսոնը իր հոդվածում նշում է, որ Աբբաս Միրզան, չկարողանալով թուրքերին ստիպել պարսկական կողմին ձեռնտու հաշտության կնքել, հարկադրված էր վերադառնալ Թավրիզ և ցրել հիմնականում անկանոն հեծելազորից բաղկացած իր բանակի մեծ մասը[27]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ, ամենայն հավանականությամբ, 1821-1822 թթ. ձմռանը պարսիկները լքել են Հասան-Ղալան, ապա 1822 թ. ռազմական գործողությունների վերսկսումից հետո այն հետ են նվաճել: Ադրբեջանցի պատմաբան Ն. Գյոզալովան, Երևանի Հուսեյն-Ղուլի սարդարին նվիրված իր հոդ-վածում, հղում անելով Ֆրեզերին, գրում է. «...սարդարի ռազմա-

---

[20] Դիւան, էջ 516:

[21] Записки А. П. Ермолова, с. 390.

[22] Դիւան, էջ 516:

[23] http://www.karalahana.com/makaleler/tarih/osmanli-iran-savasi-1821-1823.html

[24] Նույն տեղում:

[25] Նույն տեղում:

[26] Потто В., նշվ. աշխ., էջ 10:

[27] Williamson G. *The turko-persian War of 1821-1823: winning the war but losing the peace/ War and Peace in Qajar Persia, Edited by Roxane Farmanfarmaian, NY, 2008, p. 95.*

գիտական ունակությունները և զորավարական տաղանդը ի հայտ եկան Օսմանյան կայսրության դեմ Աբբաս Միրզայի ձեռնարկած ռազմական գործողությունների ժամանակ: Խանը, չնայած զառամյալ հասակին, 1821 թ. կարողացավ գրավել օսմանյան Հասան-Ղալա բերդը»[28]: Նախ, ինչպես վերը նշեցինք, Ֆրեզերը պատերազմի սկիզբ համարում է 1822 թ., ապա բրիտանացի այս հեղինակի գրքում անդրադարձ չկա ո՛չ Երևանի սարդարի ռազմագիտական ունակությունների և զորավարական տաղանդի, ո՛չ էլ Հասան-Ղալան նրա հրամանատարությամբ գրավելու մասին: Համաձայն Թեքդեմիրի, Հասան-Ղալան անակնկալ գրոհով գրավել է ոչ թե Երևանի սարդարը, այլ նրա եղբայր Հասան խանը[29]: Վերին Բասե-ում ծավալված ռազմական այս գործողությունների վերաբերյալ արժեքավոր հավելումներ է անում Վարդան Օձնեցին: Չհիշատակելով Հասան-Ղալայի գրավման մասին՝ նա գրում է, որ Երևանի սարդարի և նրա եղբայր Հասան խանի հեծելազորը «ել ի սահմանս Բայազիդոյ սակաւաձեռն զօրոք ի 1821 ամի, ձաղոնս ընկալեալ մանաւանդ ի կորովի հայոց Արմուղլի և Բաշ գյուղօրէից, դարձաւ ի Երևան՝ սմբակակոխ առնելով արտորոյս Բասենոյ և Բագրևանդայ»[30]: Այսպիսով, Երևանի սարդարին չի հաջողվել անպատիժ թալանել և ավերել Ներքին Բասենի հայկական գյուղերը և Հասան-Ղալայից շուրջ հարյուր կիլոմետր դեպի արևելք ընկած Արմու-դլուի և Բաշգյուղի հայ բնակիչների կազմակերպված դիմադրությանը հանդիպելուց հետո Գյոզալովայի նշած «զորավարական տա-ղանդը» հուշել է Երևանի սարդարին և նրա եղբայր Հասան խանին պարզապես խայտառակ կերպով նահանջել:

1822 թ. ավելի հաջող էր Երևանի սարդարի զորքերի համար: Այս թվականի գարնանը նրա բանակը, որ բաղկացած էր ութհազարանոց հետևակից և չորս հազարի հասնող հեծելազորից, Կարս քաղաքի մատույցներում շրջապատում է շուրջ հազարի հասնող թուրքական զորաջոկատը, որը, օգնություն չստանալով, Կարսի պարետ Սեիդ Իբրահիմ Սեբաստացի փաշայի գլխավորությամբ գերի է հանձնվում[31]: Անտեսելով երևանյան իր վասալների դժգոհությունը՝ Աբբաս Միրզան այս գերիներին, առանց փրկագնի ազատ արձակեց[32]: Ըստ Ա. Երմոլովի՝ Կարսի ահաբեկված թուրք վերնախավը խնդրում է ռուսներին զորք մտցնել փաշայության տարածք: Սակայն Կովկասի կառավարչապետը բավարարվում է միայն այդ փաշայության առանձին բնակավայրեր փոքր զորաջոկատներ մտցնելով՝ Թուրքիայում գնված հացահատիկի պահպանության անվան տակ[33]:

---

[28] http://irs-az.com/new/pdf/201210/1350544227230027747.pdf

[29] http://www.karalahana.com/makaleler/tarih/osmanli-iran-savasi-1821-1823.html

[30] MM-4331-185b.

[31] Դիւան, էջ 432; MM-4331-185b.

[32] **Sykes P. A.** History of Persia, v. II, London, 1915, p. 416.

[33] Записки А. П. Ермолова, с. 390.

Կարսի փաշայության տարածքի հայկական բնակավայրերը ենթարկվում են գերեվարման, թալանի և ավերի: Գերությունից և բռնություններից խուսափելով՝ շուրջ հինգ հարյուր հայ ընտանիք, Կարսի Օսման փաշայի համաձայնությամբ գաղթում է Ռուսական կայսրության տարածք: Պարսիկների կողմից գերված հայերը տարվում են Թավրիզ, Թեհրան և Երևան: Երևանում հայտնված գերիների մեծամասնությանը Էջմիածնի միաբանները և Ամենայն հայոց կաթողիկոս Եփրեմ Զորագեղցին փրկագնում են, ինչը, ըստ Վարդան Օձնեցու, ավելի է մեծացնում կաթողիկոսարանի պարտքը[34]:

Թեմային անդրադարձած բոլոր հեղինակները համակարծիք են այն հարցում, որ ռազմական գործողությունների գագաթնակետը Վերին Բասենում Հասան-Ղալայի մոտ տեղի ունեցած ճակատա-մարտն է: Սակայն տարակարծությունները ի հայտ են գալիս ճակատամարտի տարեթվի հետ կապված: Վ. Պոտտոն և բրիտանացի հեղինակ Հ. Ուիլյամսոնը գտնում են, որ Բասենի ճակատամարտը տեղի է ունեցել 1822 թ.[35]: Վերջինս ճակատամարտի ամսաթիվ է նշում մայիսը: Այս երկու հեղինակներն էլ 1823 թ. տեղի ունեցած ռազմական գործողություններ չեն հիշատակում ո՛չ Արևմտյան Հայաստանում, ո՛չ Իրաքում:

Հայկական աղբյուրները՝ վանահայր Հովհաննես Սեբաստացին և Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին, Բասենի ճակատամարտի տարեթիվ են նշում պատերազմի վերջին տարին՝ 1823 թ.:

Ճիշտ են Պոտտոն և Ուիլյամսոնը: Ա. Երմոլովին ուղղված՝ 1822թ. սեպտեմբերի 28-ի իր զեկույցում Ս. Մազարովիչը տեղեկացնում է Բասենի ճակատամարտի մասին, իսկ Ա. Երմոլովը նույն թվականի նոյեմբերի 9-ին թվագրված նամակով հաղթանակի կապակցությամբ շնորհավորում է Աբբաս-Միրզային[36]:

1821 թ. նոյեմբերին Խոջա Խոսրեվ Մեհմեդ փաշայի պաշտոնանկությունից հետո Էրզրումի վալիի և թուրքական բանակի գլխավոր հրամանատարի՝ սերասկերի պաշտոնը ստանձնեց Մեհմեդ Էմին Ռաուֆ փաշան[37]: Ա. Բերժեն և նրան հղում արած Ս. Մինասյանը կարծում են, որ վերոնշյալ պաշտոնը ստանձնել և Բասենի ճակատամարտում թուրքական բանակը գլխավորել է Յոզղատի դերեբեյ Չափանօղլու Մեհմեդ Ջալալեդդին փաշան[38]: Հովհաննես Սեբաստացին հաղորդում է, որ Չափանօղլու Մեհմեդը ոչ թե թուրքական բանակի հրամանատարն էր, այլ այդ բանակի առաջապահ զորամասերի հրամանատարը՝ «նախամարտիկ կարգէ (սուլթան Մահմուդ Բ-ն - Մ. Լ.)

---

[34] Նույն տեղում; MM-4331-185b, 186a.

[35] Потто В., նշվ. աշխ., էջ 10; Williamson G., նշվ. հոդվ., էջ 95-97:

[36] Акты, т. VI, ч. 2, с. 270-271.

[37] Դիւան, էջ 433, MM-4331-187b: Williamson G., նշվ. հոդվ., էջ 95; http://www.-karalahana. com/-makaleler/tarih/osmanli-iran-savasi-1821-1823.html

[38] Берже А. Самсон Яковлевич Макинцев и руссие беглецы в Персии (Русская старина, 1875, с. 175); Минасян С. Роль армян в персидской армии в первой половине XIX века (Պատմա-բանասիրական հանդես, 2003, - 1, էջ 236).

զանուանին զայն Չափառօղլու Մէհմէդ փաշան, զոր բազում զօրոք անցեալ ի Սեբաստիոյ գնաց Կարին»[39]: Թուրքերը, ռազմական գործողությունների իրենց ծրագիրը կառուցել էին այն հանգամանքից ելնելով, որ Արևմտյան Հայաստանում գործող պարսկական հիմնական ուժերը ձմռանը Աբբաս Միրզայի կողմից զորացրվել էին. նրանք մտադիր էին արագ վերանվաճել պարսիկների գրաված բերդերը, ներխուժել Իրանական Ադրբեջան և թուրքական կողմին ձեռնտու հաշտության պայմաններ թելադրել[40]: Սակայն այս պլանները ձախողվեցին Հասան-Ղալայի պարսկական կայազորի կատաղի դիմադրության հետևանքով, ինչը Աբբաս Միրզային հնարավորություն ընձեռեց զորահավաք կատարել և շարժվել թուրքերին ընդառաջ: Վ. Պոտտոն նույնպես անդրադառնում է թուրքերի կողմից Հասան-Ղալայի պաշարմանը, սակայն, նրա ներկայացմամբ, պաշարումը տեղի է ունեցել ոչ թե ճակատամարտից առաջ, այլ՝ հետո: Համաձայն այս հեղինակի՝ Կարսի փաշայության տարածքից քառասուն հազարի հասնող թուրքական մի զորաբանակ իբր պաշարում է Հասան-Ղալայի բերդը, որի պարսկական կայազորին փրկում է ճակատամարտը շահած, բայց թուրքերի հակահարձակման կեղծ լուրից խուճապահար նահանջող պարսկական բանակը[41]: Պոտտոն խեղաթյուրում է իրադարձությունների ընթացքը: Շահած ճակատամարտից հետո պարսկական բանակը չի նահանջել, այլ ինչպես գրում է Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին, գրավել է Բագրևանդի, Տարոնի գավառները և Էրզրումի փաշայության հարավարևմուտքում գտնվող Քղիի գավառը[42]: Կարսի փաշայությունում թուրքերը չէին կարող քառասունհազարանոց զորք ունենալ, քանի որ այս փաշայության ունեցած մարդուժի պոտենցիալը չէր գերազանցում քսանհինգ հազարը[43]:

Թուրքական և պարսկական բանակները հանդիպեցին Հասան-Ղալայի մոտ՝ Էրզրում տանող ճանապարհին: Ըստ Ուիլյամսոնի՝ թուրքական բանակը հասնում էր քառասունից վաթսուն հազարի, պարսիկները մարտադաշտ էին հանել մոտ քսանհազարանոց զորք, որը, սակայն, շատ ավելի մարտունակ էր[44]: Հովհաննես Սեբաստացին և Վարդան Օձնեցին չեն նշում պարսիկների թվաքանակը, իսկ թուրքական բանակի՝ նրանց ներկայացրած թիվը համընկնում է Ուիլյամսոնի նշածին[45]: Ե՛վ սերասկեր Մեհմեդ Էմին Ռաուֆ փաշան, և՛ թագաժառանգ Աբբաս Միրզան մարտադաշտում բանակները դասավորեցին ավանդական միջնադարյան մարտակարգով. թուրքական բանակի կենտրոնում Ռաուֆ փաշայի, աջ և ձախ թևերում՝ համապատասխանաբար Յոզղատի դերեբեյ Չափանօղլու Մեհմեդ Ջալալեդդին փաշայի և

---

[39] *Դիւան, էջ 433; MM-4331-187b.*
[40] **Williamson G.,** *նշվ. հոդվ., էջ 95:*
[41] **Поттo В.,** *նշվ. աշխ., էջ 10:*
[42] *MM-4331-187b.*
[43] **Williamson G.,** *նշվ. հոդվ., էջ 92:*
[44] *Նույն տեղում, էջ 96:*
[45] *Դիւան, էջ 433, MM-4331-187b.*

Վանի Խան-Մահմուդ փաշայի զորքերն էին: Պարսկական բանակի կենտրոնը գբաղեցնում էին Աբբաս Միրզայի և Ամիր խանի անմիջական հրամանատարության տակ գործող զորքերը, ձախ և աջ թևերում տեղաբաշխվել էին Երևանի խանության ուժերը՝ Հուսեյն-Ղուլի սարդարի և նրա եղբայր Հասան խանի հրամանատարությամբ[46]:

Ճակատամարտի ելքը որոշեցին պարսկական հրետանու, ռուս դասալիքների՝ «Բահադրան» կոչվող գնդի և եվրոպական տիպի ռազմական պատրաստություն ստացած հետևակ զորքերի հաջող գործողությունները:

Թուրքերի փորձը, օգտվելով թվական գերակշռությունից, հեծելազորային գրոհով ճեղքել պարսկական ճակատը, ձախողվեց: Հայտնվելով պարսկական հրետանու կործանիչ կրակի տակ՝ անձամբ սերասկեր Ռաուֆ փաշայի առաջնորդած թուրք հեծյալները խուճապահար նահանջեցին: Ձախ թևում բահադրանների գնդի մասնակցությամբ պարսկական կանոնավոր հետևակի հարձակումն ավարտվեց թուրքական բանակի փախուստով[47]:

Իրաքում նույնպես ռազմական հաջողությունները ուղեկցում էին պարսիկներին. այս ճակատում Մուհամմադ-Ալի Միրզայի գլխավորած զորքերը ռազմական գործողությունների սկզբից ևեթ գրավեցին Մոսուլը, Քիրքուքը և 1821 թ. հոկտեմբերին հայտնվեցին Բաղդադից մեկ օրվա արշավի հեռավորության վրա: Սակայն պարսկական բանակում սկիզբ առած խոլերայի համաճարակը Մուհամմադ-Ալի Միրզային ստիպեց նահանջել: Նույն թվականի դեկտեմբերին արքայազնը մահացավ այդ հիվանդությունից[48]:

Այստեղ հարկ է անդրադառնալ Վարդան Օձնեցու և Ազիզ Թեքդեմիրի[49] ուշագրավ հաղորդումներին: Համաձայն Վարդան Օձնեցու՝ Բասենի ճակատամարտին մասնակցած Մուհամմադ-Ալի Միրզան համաճարակից մահացել է Մուշում[50]: Իրաքից համաճարակը տարածվեց նաև Արևմտյան Հայաստանում, որտեղ կռվող պարսկական բանակում խոլերայի զոհ դարձավ չորս հազար մարդ[51]: Համաճարակը և որպես դրա հետևանք՝ պարսկական բանակում մեծ չափեր ընդունած դասալքությունը Աբբաս Միրզային հարկադրեցին պարսկական բանակը հետ քաշել Արևմտյան Հայաստանից[52]:

Հակառակորդների միջև զինադադար հաստատվեց[53], ապա անգլիացիների միջնորդությամբ 1823 թ. հուլիսի 28-ին Էրզրումում ստորագրվեց հաշտության պայմանագիր, որով պահպանվեց մինչև պատերազմը եղած տարածքային ստատուս-քվոն.

---

[46] Williamson G., *նշվ. հոդ., էջ 96:*

[47] *Նույն տեղում, էջ 96:*

[48] *Նույն տեղում, էջ 100:*

[49] *http://www.karalahana.com/makaleler/tarih/osmanli-iran-savasi-1821-1823.html*

[50] *MM-4331-188b.*

[51] Williamson G., *նշվ. հոդ., էջ 97:*

[52] *Նույն տեղում:*

[53] Дубровин Н. *История войны и владычества русских на Кавказе, т. VI, СПб., 1888, с. 554.*

կողմերը պարտավորվում էին չմիջամտել միմյանց ներքին գործերին, քրդական ցեղերի սահմանը հատելու կարգ էր մտցվում, կարգավորվում էին պարսկահպատակ շիա ուխտավորների իրավունքները ինչպես համահպլամական, այնպես էլ շիաների իրաքյան սրբավայրերում, Օսմանյան կայսրության տարածք արտահանվող պարսկական ապրանքների մաքսատուրքը նվազեցվում էր մինչև չորս տոկոսի, գերիների փոխանակություն էր կատարվում, հակառակորդին կամավոր հանձնված դասալիքներին ներում էր շնորհվում[54]*:*

Պարսկաստանին չհաջողվեց Էրզրումի հաշտության պայմանագրով ամրագրել մարտադաշտում տարած հաղթանակները: Պատճառը ֆինանսական և քաղաքական հանգամանքներն էին: Խոշոր և մարտունակ բանակ պահելու համար ո՛չ Աբբաս Միրզան, ո՛չ Մուհամմադ-Ալի Միրզան համապատասխան ֆինանսական միջոց-ներ չունեին: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հասց-ած նյութական կորուստները չէին վերականգնվել: Երկարատև և լայնածավալ պատերազմի համար անհրաժեշտ էին պետական բյուջեից մեծածավալ հատկացումներ: Սակայն Ֆաթհ-Ալի շահը, չնայած նյութական օգնություն հատկացնելու բազմաթիվ խնդրանքներին, բավարարվեց երկու հազար թուման խորհրդանշական գումարով[55]*: Շահի հրամանով նրա փեսա Ալլահ-Յար խանի գլխավորությամբ կազմավորված բանակը Աբբաս-Միրզան անվանում էր «թույն պարունակող գավաթ», քանի որ այդ բանակը պահելու ամբողջ ծանրությունն ընկնում էր թագաժառանգի վրա: Կասկածներ կային, որ շահի կրավորական կեցվածքը պայմանավորված էր «Բաղդադից փողի ծանր պարկեր ստանալու իրողությամբ, քանի որ ազահությունը նրա էության մեջ էր»*[56]*:*

Չարդարացան Ռուսաստանին թուրքերի դեմ պատերազմի մեջ ներքաշելու Աբբաս Միրզայի հույսերը: Չցանկանալով սրել հարաբերությունները Անգլիայի հետ՝ Կ. Նեսսելրոդեն չընդունեց Օսմանյան կայսրության դեմ Պարսկաստանի դաշինքի առաջարկը[57]*: Միայն 1825 թ. Բալկաններում իր ազդեցությունը ամրապնդելու նպատակով Ռուսաստանը սկսեց հակվել հույներին օժանդակելու մտքին*[58]*:*

Թուրք-պարսկական պատերազմը հարված հասցրեց Մերձավոր Արևելքում բրիտանական շահերին. վերջնականապես ի դերև ելան հակառուսական անգլո-թուրք-պարսկական բլոկ կազմավորելու ծրագրերը: Թեհրանի 1814 թ. պայմանագրի համաձայն, զինելով պարսկական բանակը՝ անգլիացիները մտադիր էին այն ուղղել Ռուսաստանի, ոչ թե Թուրքիայի դեմ: Ինչպես գրում է խորհրդային պատմաբան Ս. Շոստակովիչը, «Թուրքիայի՝ Իրանի հետ պատերազմը կարող էր միայն բերել նրան, որ

---

[54] *http://www.karalahana. com/makaleler/tarih/osmanli-iran-savasi-1821-1823.html*

[55] **Williamson G.,** *նշվ. հոդվ., էջ 98:*

[56] *Նույն տեղում, էջ 99:*

[57] *Российский государственный исторический архив, ф. 108, п. 2, д. 90, л. 11.*

[58] *Всемирная история, т. VI, М., 1959, с. 143.*

«անհրաժեշտ պահին» Իրանը, թուրքերի վրա ծախսելով իր բոլոր ռազմական պաշարները, կհայտնվեր Ռուսաստանի հետ ռազմական բախման համար բացարձակ անպատրաստ վիճակում»[59]:

Թուրք-պարսկական 1821-1823 թթ. պատերազմից միակ շահողը թերևս Ռուսական կայսրությունն էր: Չմասնակցելով պատերազմական գործողություններին՝ Ռուսաստանը տնտեսական և քաղաքական ձեռքբերումներ ունեցավ. փակվեց Տրապիզոն-Թավրիզ առևտրային ճանապարհը, ինչի շնորհիվ Պարսկաստանում ռուսական առևտուրը գերիշխող դիրքի հասավ: Մաքսային վիճակագրության համաձայն, 1821-1823 թթ. Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տարեկան միջին առևտրային շրջանառությունը 1814-1815 թթ. համեմատ մեծացավ ավելի քան երկու անգամ[60]: Պատերազմը հարված հասցրեց Մերձավոր Արևելքում Ռուսաստանի գլխավոր ախոյան Անգլիայի հեղինակությանը:

Պատերազմի հետևանքով և՛ Օսմանյան կայսրությունը, և՛ Պարսկաստանը նյութական ու մարդկային կորուստներ ունեցան: Սակայն ամենից մեծ կորուստներ կրեց արևմտահայությունը: Համաձայն Վարդան Օձնեցու՝ գերված, համաճարակից և ռազմական գործողություններից զոհված հայերի քանակն անցնում էր երեսուն հազարից: Պատերազմին անմիջապես հաջորդած սովը նույնպես մեծաքանակ զոհեր խլեց. «Հետ այսորիկ նեղէր յոյժ զմնացեալ աշխարհն սով սաստիկ, մինչև սպառեալ զանսուրբ կենդանիս զչորացեալ մորթս նոցայ խորշեալ ուտէին մարդիկք և ոչ հաստատէին սիրտք նոցայ, զի գրեալ է, թէ հաց հաստատէ սիրտ մարդոյ»[61]: Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր հայաթափվեցին: Արևմտահայերի մի խոշոր զանգված, պատերազմից, սովից և համաճարակից խույս տալով, գաղթեց ռուսական տիրապետության տակ գտնվող Շիրակ, Լոռի, Փամբակ, Գանձակ և Վրաստան[62]:

Չնայած Էրզրումի 1823 թ. հաշտության պայմանագրով մի քանի դար տևած թուրք-պարսկական պատերազմներն ավարտվեցին, սակայն այս պայմանագիրը կայուն խաղաղության չհանգեցրեց: Երկու պետությունների միջև հակասությունները պահպանվեցին ամբողջ XIX դարի ընթացքում: Այդ հակասությունների հիմնական պատճառներից մեկը պետական սահմանների անորոշ լինելն էր: Ռուսաստանի և Անգլիայի միջամտությունը և սահմանաբաժան քառակողմ հանձնաժողովի ձևավորումը ավելի խտացրին անվստահության և թշնամանքի մթնոլորտը Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Թուրք-իրանական սահմանին քրդական անջատողական շարժումը նույնպես լարվածության պատճառ էր: Վերջին անգամ Թուրքիայի և Իրանի միջև սահմանային փոփոխություն է տեղի ունեցել 1932 թ. հունվարի 31-ի համաձայնագրով, երբ թուրքա-

---

[59] **Шостакович С.,** *նշվ. աշխ., էջ 68:*

[60] *Российский государственный исторический архив, ф. 19, д. 105, л. 186.*

[61] *ՄՄ-4331-188b.*

[62] *Նույն տեղում:*

կան բանակի կողմից քրդերի ապստամբության ճնշումից հետո Փոքր Արարատի արևելյան լանջը գագաթից հինգից վեց կիլոմետր շառավղով անցավ Թուրքիային[63]*:*

АНГЛО-РУССКОЕ СОПЕРНИЧЕСТВО И ПОСЛЕДНЯЯ ТУРЕЦКО-ПЕРСИДСКАЯ ВОЙНА 1821-1823 ГГ.

МКРТУМЯН Л. А.

Резюме

В межгосударственных отношениях стран Ближнего и Среднего Востока в силу геополитических и экономических причин особое место занимают ирано-турецкие отношения. В XV-XVIII вв. эти отношения нашли отражение в перманентных войнах между этими двумя странами, стремившимися установить контроль над связывающими Европу с Востоком стратегически важными путями и занять доминирующее положение в исламском мире. В начале XIX в. этой враждой воспользовались Англия и Россия, имевшие свои интересы на Ближнем и Среднем Востоке. Опасаясь усиления влияния противной стороны в Османской империи и Персии, Англия и Россия пытались либо натравить Турцию и Персию друг на друга, либо сколотить с ними союз против конкурирующей стороны. Эта политика и привела к турецко-персидской войне 1821-1823 гг. Война не внесла каких-либо изменений в территориальный статусквo, однако причинила немалые страдания местному мирному населению, особенно западным армянам.

[63] *Encycopaedia Iranica, vol. II, fasciale 3, NY, 1986, pp. 265-266.*

BRITISH-RUSSIAN RIVALRY AND THE LAST TURKISH-PERSIAN WAR OF 1821-1823

L. MKRTUMYAN

Abstract

Turkish-Iranian relations had been of a special importance among the countries of the Middle East due to a number of geopolitical and economic reasons. In the XV-XVIII centuries these relations were expressed in the permanent wars between this two countries aiming at the establishing control over strategically important routes connecting Europe with the East and taking a leading position in the Islamic world. In the beginning of the XIX century this hostility was used by England and Russia who had completely opposite goals in the Middle East. Being afraid of their rival's growing influence in the Ottoman Empire and in Persia, both England and Russia applied an increasing pressure upon these two countries, trying either to set Turkey and Persia against each other or to knit together with them against rival country. This policy led to the Turkish-Persian war of 1821-1823. The war didn't change territorial status quo but caused huge sufferings to local peaceful settled population, especially to the Western Armenians.